Հավելված N 4
,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ,,
հիմնադրամի ռեկտորի
24.11.2016թվականի N 51 հրամանի

,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ'' ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտե հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) գնումների և պլանավորման բաժինը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեության իրավական հիմքը գնումների մասին ՀՀ օրենսդրությունն է, Ինստիտուտի և սույն կանոնադրությունները և ինստիտուտի ռեկտորի կողմից արձակված իրավական ակտերը:

1.2 Սույն կանոնադրությամբ սահմանվում են գնումների և պլանավորման բաժնի (այսուհետ՝ բաժին) կողմից իրականացվող Ինստիտուտի կարիքների համար անհրաժեշտ գնումների, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության և ֆինանսավորման,համապատասխան հանձնաժողովների կազմավորման և գործունեության, գնումների հետ կապված հրավերի կազմակերպման և պայմանագրերի հիմնական պայմանները, ինչպես նաև կարգավորվում են փոխհարաբերությունները գնումների մասով,այդ թվում սահմանում գնման ընթացակարգերի բովանդակությունը, հաջորդականությունը, կատարման ժամկետները և գնման գործընթացի կառավարման մարմինների և սուբյեկտների հիմնական գործառույթները:

2.ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1.Բաժնի նպատակներն են՝

1) գնումների մասին գործող օրենսդրությանը համապատասխան , ինստիտուտի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, ծառայության և աշխատանքների պլանավորումն ու գնումների իրականացումն է՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

2.2. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1) ինստիտուտի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պլանավորում,
2) ինստիտուտի կարիքների գնման առարկայի, օբյեկտի, կիռարման ոլորտի, գործընթացի բովանդակության և ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման հետ կապված հարաբերությունների իրականացմանը ներկայացվող պահանջների սահմանում,
3) ինստիտուտի, որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնորդ, դրական իմիջի ստեղծում
4) գնման մասնակիցների ինստիտուտի գնումներին մասնակցելու հավասար, արդար և ոչ խտրական պայմանների ապահովում
5) Արդար մրցակցության զարգացում,

6) ինստիտուտի գնման գործունեությանը մասնակցող աշխատակիցների կողմից չարաշահումների կանխարգելում,
7) ինստիտուտի գործունեության յուրաժամ և ամբողջական ապահովում ապրանքներով, աշխատանքներով և ծառայություններով՝ դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև տնտեսապես հիմնավորված (ապրանքի շուկայական արժեք) ծախսերի ստացում և գնումները իրականացնող աշխատակիցների կողմից հնարավոր չարաշահումների կանխարգելում,
8) գնումների գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2.3. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է:

2.3.1. Բաժնի գործառույթներն են՝

1) գնումների պլանավորում.
2) գնումների նախապատրաստում.
3) պայմանագրի կնքում.
4) պայմանագրի կատարում:

2.4. Գնումների գործընթացին առնչվում են նաև հետևյալ գործընթացները՝ (գործառույթները)՝

1) հաշվետվողականություն, որը ինստիտուտի կողմից ձեռնարկվող միջոցների ամբողջականությունն է, որով ապահովվում են գնումների գործընթացի վերաբերյալ ամբողջական, արժանահավատ և ժամանակին տեղեկությունների առկայությունը:

2) հսկողություն, ինստիտուտի կողմից գնումների գործընթացի ինքնուրույն գնահատումն է:

Հսկողության նպատակն է ապահովել, որ՝

ա) առկա ռեսուրսներն օգտագործվեն և գործառույթները կատարվեն նախանշված պայմաններին համապատասխան,

բ) միջոցները պաշտպանված լինեն վատնումից, խարդախությունից,

գ) որոշում ընդունելու համար առկա լինի վստահելի և ժամանակին ներկայացված տեղեկատվություն:

3) ներքին աուդիտ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Բաժնի կազմը և թվաքանակը հաստատվում է ռեկտորի կողմից՝ հաշվի առնելով ինստիտուտի գործունեության պայմանները և առանձնահատկությունները:

3.2 Բաժինը կազմված է հետևալ աշխատակիցներից՝

1) բաժնի վարիչ,
2) մատակարար,
3) ապրանքագետ:

3.3 Բաժնի աշխատակիցներն ընդունվում և ազատվում են ռեկտորի հրամանով:

3.3 Բաժնի ղեկավարումը իրականացնում է վարիչը, որը պաշտոնին նշանակվում և ազատվում է ռեկտորի հրամանով: Բաժնի վարիչը անմիջապես ենթարկվում է ռեկտորին:

4. ԲԱԺՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

4.1. Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: